ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1951 *Общественные науки*

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԸ

Մեզ հանձնարարված էր կազմել ուրարտական սեպագիր արձանագրությունների կորպուսը։ Նպատակահարմար համարեցինք նախ աշխատել Սովետական Հայաստանի, ապա Սովետական Միության տերիտորիայում գտնվող արձանագրությունների վրա, քանի որ այս դեպքում միանգամայն հնարավոր է բնագրերի ուսումնասիրության հիման վրա ճշտել նախորդ ընթերցումները, իսկ հետագայում հնարավոր կլինի ճշտել նաև այն տեքստերը, որոնց բնագրերը մեզ համար դեռևս անմատչելի են (գտնվում են Սովետական Միության սահմաններից դուրս)։

1950 թ. պլանով պետք է առանձին պրակով պատրաստվեր Սովետական Հայաստանի տերիտորիայում հայտնաբերված ուրարտական արձանագրությունների ժողովածուն. այսպիսի մի աշխատանք 1896 թվին կատարել է ռուս խոշոր գիտնական Մ. Նիկոլսկին։ Սակայն, Մ. Նիկոլսկու այդ աշխատությունը, իր անուրանալի արժանիքներով հանդերձ, շատ դեպքերում թյուրիմացության մեջ է գցում այսօրվա ուսումնասիրողին այն զարգ պատճառով, որ ուրարտագիտության վերջին 50—60 տարվա ընթացքում ձեռք բերած նվաճումները հնարավոր են դարձրել բոլորովին նոր մեկնաբանություն տալ այդ տեքստերին, որով և հաճախ փոխվում են պատմական արժեք ունեցող եզրակացությունները։

Բացի դրանից, Սովետական Հայաստանի տերիտորիայում 1896 թվից հետո հայտնաբերվել են մի շարք նոր արձանագրություններ, որոնք հրատարակված են ցաք ու ցրիվ, տարբեր ամսագրերում և երբեմն չեն բավարարում ուրարտագիտության այսօրվա պահանջներին։ Այսպես, օրինակ, հայտնաբերված են 1893 թվին՝ աղյուսի վրա յոթ տողանի մի արձանագրություն Արմավիրում, 1896 թվին՝ Շահրիարի արձանագրությունը, 1900 թվին՝ Զվարթնոցի կոթողը, 1908 թվին՝ Սարգուր II-ի 28 տողանի արձանագրությունը Արմավիրում, 1912 թվին՝ Թալիշի (Արուճ) արձանագրությունը, 1927 թվին՝ Նոր-Բայազետի, 1928 թվին՝ Ջանֆիդայի արձանագրությունը, 1940 թվին Կարմիր-Բլուրի բրոնզե վահանը, 1947 թվին՝ Կարմիր-Բլուրի բրոնզե սաղավարտի արձանագրությունը, 1950 թվին՝ Արինբերդի երկու արձանագրությունները և այլն։

Մյուս կողմից՝ Կարմիր-Բլուրի սիստեմատիկ պեղումները ցույց են տալիս, թե որքան կարևոր է ուրարտական կուլտուրայի ուսումնասիրությունը ընդհանուր պատմության համար ընդհանրապես և Հայաստանի (նաև Անդրկովկասի) պատմության ուսումնասիրության համար հատկապես։

1950 թ. մենք հավաքել ենք նախատեսված պրակը կազմող արձանագրությունների տեքստերը։ Սրանք հիշատակում են ուրարտական հինգ թագավորի անուն՝ Արգիշտի Ա, Սարգուր Բ, Ռուսա Ա, Ռուսա Բ և Ռուսա Գ, այսինքն՝ Ուրարտուի հզորացման օրերից (8-րդ դար մեր թվ. առաջ) մինչև նրա վերջին շառավիղը՝ Ռուսա Գ-ը։

Պրակը ընդգրկում է հետևյալ արձանագրությունները։

Արգիշտի Ա-ից՝ մինչև այժմ մեր տերիտորիայում հայտնաբերված է 15 արձանագրություն, որից երեքը բրոնզե երկու վահանի վրա։ Դրանք են.

1. Հոկտեմբերյանի (Սարդարարադի) արձանագրությունը, 14 տող, շինարարական բնույթի. հաղորդում է հոյակապ բերդի կառուցման մասին, որը կոչվում է Արգիշտականք. տեքստը խոսում է բերդը պատրաստելու, Մունա (Արաքս) գետից առուներ անցկացնելու, ծառեր տնկելու և այլ ձեռնարկություններ կատարելու մասին։

2. Զարագալայի արձանագրությունը՝ 10 տող, շինարարական, հաղորդում է ջրանցքի կառուցման մասին, որ կառուցում է Արգիշտին Խալդ աստծու մեծությամբ, նրա հրամանով։

3. Արինբերդի (Ղանլիթափայի) 4 տող արձանագրությունը, շինարարական, հաղորդում է 10100 kapi(?)-ով 'arî կառուցելու մասին։

4. Արինբերդի 13 տող արձանագրությունը, շինարարական բնույթի. հաղորդում է հոյակապ բերդ կառուցելու մասին, որը Արգիշտին կոչում է քաղաք Իրբունի, խոսում է այդտեղ հզոր ձեռնարկություններ կատարելու մասին ի փառս Բիայնա երկրի և ի սարսափ Թշնամու երկրի։

5. և 6. Շահրիարի և Ղաղանչիի արձանագրությունները, կրոնա-շինարարական բնույթի, հաղորդում են տաճարի կառուցման մասին։

7. Թափադիրիի (այժմյան Արմավիր գյուղի մոտ) 13-ական տող երկու բեկորները, որոնք կազմում են մի մեծ արձանագրության աջ և ձախ մասերը, չի գտնված միջին քարը, ինչպես և, հավանաբար, շարունակությունը կազմող ցածի երեք քարերը։ Տեքստը կրոնա-ծիսակատարական է, որ հաղորդում է, թե ինչպես Արգիշտին՝ Արգիշտիխինայում՝ Թշնամու երկրին (Ադայան) սահմանված հողում, նվիրաբերություններ է կատարում Խալդուն, որի դիմաց, ըստ երևույթին, քրմական երարխիան որոշ զոհաբերություններ ու արարողություններ է մատուցում Արգիշտու անվամբ (հիշենք հայկական վիմագրերի տեքստերը)։

8. Արմավիրի 11 տող արձանագրությունը, որը կազմում է առնվազն վեց նման քարի վրա փորագրված մեծ արձանագրության միայն միջին մասը. թեև և՛ սկզբից, և աջ ու ձախ կողմերից թերի է, սակայն հիմնական իմաստը պարզ է. տեքստը կրոնա-ծիսակատարական է, հաղորդում է ինչ-որ առարկաներ նվիրելու, զուշակությունների ու արջառ, երինջ, ոչխար, դաո Խալդուն զոհաբերելու մասին։ Հաղորդում է նաև զոհարան ու Ê. sirihani (թերևս զոհասեղան) կառուցելու մասին։

9. Էլարի արձանագրությունը՝ 10 տող, ռազմական բնույթի. Խալդը արշավում ու նվաճում է Etiuni երկիրը. խալդյան փառքով արշավում է Արգիշտին և նվաճում է Ուլուանի (Uluani) երկիրը, Դարանի (Daarani) քաղաքի հողը։

10. Մարմաշենի (Ղանլիջայի) արձանագրությունը՝ 5 տող, ռազմական բնույթի, տեքստը հաղորդում է, որ Արգիշտին նվաճում է Էրիախի (Eriahi) երկիրը, նվաճում է Իրդանիունի (Irdaniuni) քաղաքը մինչև Իշկիգուլու (Iškigulu) երկիրը։

11. Կուլիջանի արձանագրությունը՝ 7 տող, ռազմական բնույթի, տեքստը հաղորդում է, որ Խալդը արշավում և նվաճում է Կուլիաինի երկիրը (Kuuliaini), ձգում է այն Արգիշտու առջև, Արգիշտին նվաճում է Դուրուբանի (Durubani) քաղաքը, Կուլիաինի երկրի (?)։

12. Լճաշենի (Օրդաբլուի) արձանագրությունը՝ 9 տող, ռազմական բնույթի. տեքստը հաղորդում է, որ Արգիշտին նվաճում է Կիեխունի (Kiehuni) քաղաքի երկիրը (=հողը?), հատում է (?) այն մինչև քաղաքը Իշտիկունի (Jštikuni) ծովեզերյա (?)։

Թեև վերջին երեք արձանագրությունները չեն հիշատակում Արգիշտիի հայրանունը, բայց անկասկած սրանք պատկանում են Արգիշտի Ա մեծ նվաճողին։

Վերջին չորս արձանագրությունից բացի՝ նախորդները կառուցողական մասեր են՝ որմնաքարեր, սյան խարիսխներ, սանդղաձև քարեր և այլն։

13 և 14. արձանագրությունները փորագրված են մեկ մետր տրամագիծ ունեցող, 1940 թվին Կարմիր-Բլուրից հայտնաբերված բրոնզե վահանի եզրին՝ երկու շրջագծով, իրենց բնույթով նվիրաբերական են։

15. Կարմիր-Բլուրի փոքրիկ վահանի բրոնզե կոնաձև ղլխիկի եզրին կարդացվում է միայն Արգիշտիի հայրանունը։

Արգիշտի Ա-ի հաջորդից՝ Սարդուր Բ-ից, մեր տերիտորիայում հայտնաբերված է 10 արձանագրություն, որից մեկը բրոնզե սաղավարտի եզրին՝ գտնված 1947 թ. Կարմիր-Բլուրից։

1. (16). Արինբերդի 9 (11) տող արձանագրությունը, շինարարական բնույթի է, տեքստը հաղորդում է (1)5100 kapi(?)-ով Ê. 'arî-ի կառուցման (բարձրացման) մասին, որին դաջորդում է արքայական տիտղոսաշարը։

---

[1] Եվ ոչ թե Ադան, ինչպես կարծել են նախորդ ուսումնասիրողները։

2. (17) Ջանֆիդայի արձանագրությունը՝ 10 տող, կրոնա-շինարարական բնույթի. Սարդուրը հիմնում է «կրակատուն» (կամ պարտեզ), կառուցում է տաճար (և ոչ թե բերդ) և կոչում է այն Սարդուրի անունով։

3. (18) Արմավիրյան 28 տող արձանագրությունը, որը չափազանց հետաքրքիր ծիսակատարական բովանդակություն ունի և գրված է Արգիշտու ու Սարդուրի անունով, ի պատիվ որոնց գինու ծես է մատուցվում, դուշակություն է արվում սահմանված ձևով՝ բերդը և այլ ձեռնարկություններ, ըստ երևույթին, անսասան պահելու համար. վերջում տրվում է անեծքի ընդարձակ ֆորմուլան՝ բերդը լքողի, պարիսպն ու ձեռնարկությունները ավերողի, արձանագրությունը փչացնողի հասցեին։

4. (19) Արմավիրի 13 տող արձանագրությունը, կրոնական, նվիրատվական. տաճարը, խալդյան հոյակապ դռները նվիրաբերվում են Խալդ աստծուն՝ յուր տիրոջը։

5. (20) Բամբակաշատի (Մոլլա-Բայադետ) 10 տողանի խիստ ֆնասված արձանագրությունը, կրոնական-նվիրաբերական. Սարդուրը տաճարը կառուցում է որպես նվեր Խալդուն՝ յուր տիրոջը։ Կառուցում է, հավանաբար, նաև խալդյան դռներ և կոչում է կամ իր անունով, կամ Խալդ աստծու անունով։

6. (21) Բամբակաշատի (գտնված 1881 թվին) և Թալիշի (գտնված 1912 թվին) 8 տող արձանագրությունները. տարբեր ժամանակներում և տարբեր տեղերում գտնված այս երկու բարը կազմում են իրար շարունակություն. Թալիշի արձանաքարի չափով մի քար պակասում է սկզբից, որի տեքստը վերականգնում ենք մի այլ արձանագրության (Նիկոլսկի № 13) անալոգիայով (այստեղ՝ հաջորդ արձանագրությունը)։

7. (22) Բամբակաշատի 12 տող արձանագրությունը, որ հիմնականում նախորդ տեքստի կրկնությունն է։ Այս երկու տեքստերը նույնպես նվիրաբերական բնույթի են, նվիրաբերությունը կատարվում է հանուն Սարդուրի մեծության, փառքի, երկարակեցության ու երջանիկ օրերի։

8. (23) Կարմիր-Բլուրի սաղավարտի արձանագրությունը, նվիրաբերական բնույթի՝ նման Արգիշտի Ա-ի վահանի վրայի տեքստին։

9. (24) Ադամխանի արձանագրությունը՝ 7 տող, ռազմական բնույթի. տեքստը հաղորդում է, որ Սարդուրը թագավորանիստ Թուլիխունի քաղաքի Ծինալիրի թագավորին կռվի մեջ նվաճում է և Ծինալիրիի մարդկանց ու կանանց kutu-bi հետապնդում է (?) մինչև Ուդուրի-Էտինի երկիրը։

10 (25) Ջաղալուի արձանագրությունը՝ 9 տող, ռազմական բնույթի. տեքստը հաղորդում է, որ Խալդը արշավում և նվաճում է Արգուկինի (Arkukini) երկիրը, ապա արշավում է Սարդուրը և գրավում նույն Արգուկինի երկիրը մինչև Ուրտախինի (Urdéḥiini) երկիրը։

Սարդուր Բ-ին հաջորդում է Ռուսա Ա-ն, որի անունով մեր տերիտորիայում գտնված ընդամենը երկու արձանագրություն է հայտնի։

1. (26) Ծովինարի (Ֆյոլանդռանի) արձանագրությունը՝ 20 տող. ռազմաշինարարական բնույթի. չափազանց կարևոր մի տեքստ է, որը թվարկում է հպատակեցված 23 երկրանուն, իսկ վերջում հաղորդում է հոյակապ բերդի կառուցման մասին, որ Ռուսան կոչում է Թեյշեբա աստծու քաղաք՝ ի փառս Բիայնա երկրների։

2. (27) Նոր-Բայադետի արձանագրությունը՝ 8 տող, նույնպես ռազմաշինարարական. տեքստը հաղորդում է, որ Ռուսան նվաճել ու ստրկացրել է Վելիկուխի երկրի թագավորին, փոխարքա է դրել այնտեղ, խալդյան դռներ ու հոյակապ բերդ է կառուցել, որը անվանել է Խալդու քաղաք՝ ի փառս Բիայնա երկրների, ի սարսափ թշնամու երկրի։

Թեև նույնպես թվով քիչ, բայց ոչ պակաս հետաքրքրական են Ռուսա Բ-ի անվամբ մեր տերիտորիայում հայտնաբերված արձանագրությունները.

1. (28) Զվարթնոցի արձանագրությունը՝ 47 տող, նվիրաբերական մի կոթող է, որ հաղորդում է նաև շինարարական աշխատանքների մասին, ինչպես ծառատունկի, ջրանցքի անցկացման և այլնի մասին։ Ապա թվարկվում է Խալդ, Թեյշեբա ու Արգինի աստվածներին նվիրած զոհաբերությունները։ Սրան հաջորդում է արքայական տիտղոսաշարը ու վերջում անեծքի ընդարձակ ֆորմուլան։

2. (29) Կարմիր-Բլուրի (Զարբախի) արձանագրությունը՝ 6 տող, որը առիթ դարձավ Կարմիր-Բլուրի սիստեմատիկ պեղման. ըստ երևույթին շինարարական(?)—նվիրաբերական մի մեծ արձանագրության բեկոր է, որը պահպանել է միայն անեծքի ֆորմուլայից փշրանքներ։

3. (30)Կարմիր-Բլուրի բրոնզե դռան փակի արձանագրություն, որի տեքստն է՝ «Արգիշտյան Ռուսայի զինանոցն (է) Թեյշեբյան քաղաք (անվամբ)»։

Վերջապես մեր տերիտորիայում հայտնաբերված է երեք տողանի մի փոքրիկ արձանագրություն, որը հիշատակում է Ռուսա Գ-ին՝ ուրարտական վերջին տիրողին. շինարարական բնույթի, հաղորդում է, որ Ռուսան 1432 kapi(?)-ով բարձրացրել է (կառուցել է) Ê.'ari։

Սովետական Հայաստանի տերիտորիայում գտնված են նաև առանձին բեկորներ, որոնք չեն պահպանել հեղինակի անունը. մենք հնարավորության սահմաններում մեկնաբանում ենք նաև այդ անանուն տեքստերը. որոնցից Ա, Բ և Դ բեկորները անկասկած շինարարական բնույթի տեքստեր են, իսկ 'Ը բեկորը՝ կրոնա-ծիսակատարական։

Արձանագրությունները հաճախ ավարտվում են արքայական տիտղոսաշարով, երբեմն էլ անեծքի ֆորմուլայով։

Թեև այս արձանագրությունների հայտնաբերումը արդյունք է հիմնականում ոչ սիստեմատիկ պեղումների, այնուամենայնիվ նրանց ուսումնասիրությունը բերում է մեզ հետևյալ եզրակացությունների. նախ՝ այդ արձանագրությունները խոշոր նշանակություն ունեն ուրարտերեն լեզվի ու կուլտուրայի մասին եղած տեղեկությունները հարստացնելու, շատ բան ճշտելու, լրացնելու իմաստով։ Այս տեքստերը պարունակում են մոտ 250 բառ (ուրարտերենի՝ մեզ հասած ողջ բառապաշարը հավասար է մոտ 400 բառի), որի համարյա մեկ երրորդից ավելին կամ բոլորովին չի հանդիպում այլ արձանագրություններում, կամ 1—3 դեպքով է հայտնի և հաճախ մեր տեքստերի օգնությամբ է, որ ճշտվում կամ պարզվում է նրանց իմաստը, մանավանդ որ ուսումնասիրության ենթակա տեքստերը, հատկապես իրենց կրոնա-ծիսակատարական ու շինարարական աշխատանքների հաղորդումներով, մասամբ, իսկ որոշ դեպքերում՝ դդալի կերպով (Թափադիրիի արձանագրությունները, Զվարթնոցը, Սարդուր Բ-ի 28 տողանի արձանագրությունը և այլն) հեռանում են ուրարտական սեպագիր տեքստերին հատուկ շարլոն ոճից, կիրառում են նոր բառեր, նոր կապակցություններ և այլն։ Այսպես օրինակ՝ a-ma-ni, ar-di-a ni, a-nu-ni, gu-bu-uš-ta-li, i-ḥa-i-du-še IR-aštubi (=ստրկացնել), որը հնարավորություն է տվել մինչև այդ նման կապակցության մեջ հանդիպող buraaštubi բառի իմաստը հասկանալու, KI-ni (մենք <Y > Y> YY > նշանները ըմբռնում ենք KI-ni—հող, սահման գաղափարագիրը, ըստ Meissner-ի № 194 սեպախումբը, և ոչ թե ki-ni, որ պարզ չէ, թե ինչ է նշանակում). nuulduali taamḥubi, 'ari, kapiištini, kulietuni, giei, guni, urišhusi և այլ բազմաթիվ բառեր ու դարձվածքներ, որոնց շուրջը մենք աշխատության մեջ մեկ առ մեկ կանգ ենք առնում։

Այնուհետև՝ հետաքրքրական է այն փաստը, որ Սովետական Հայաստանի տերիտորիայում ռազմական բնույթի արձանագրություններ անհամեմատ քիչ թվով է հասել մեզ, ընդամենը՝ 8 արձանագրություն։ Մնացած 23 արձանագրությունը և 4 բեկորները շինարարական ու կրոնա-ծիսակատարական բնույթի են, ըստ որում մեծ մասը (19 արձանագրություն) պատկանում է Արգիշտի Ա-ին և Սարդուր Բ-ին։ Սա պատահական երևույթ չէ. ուրարտական պետության հզորացումը դդալի չափով կատարվում է Արարատյան դաշտավայրի նվաճման հաշվին։ Մեր համոզմամբ, մեր թվարկությունից առաջ 8-րդ դարում Արարատյան դաշտը իր Արգիշտիխինիլի (Արմավիր) կենտրոնով հենց հանդիսանում էր Ուրարտուի երկրորդ վարչա-տնտեսական, ռազմա-քաղաքական ու կուլտուր-կրոնական վայրը. Վանը, ըստ երևույթին, արդեն չէր ապահովում ուրարտական տիրապետության կայունությունը, հավանաբար անհրաժեշտ էր ունենալ նոր տնտեսական ու ռազմական բազա։ Դեռևս Մենուան, որը տիրում էր Վանի շրջակայքում (և այդ է պատճառը, որ այնտեղ հայտնաբերված արձանագրությունների մեծագույն մասը հիշատակում է Մենուա մեծ շինարարին), արդեն դուրս էր եկել Վանի շրջակայքից և թագավորանիստ քաղաք էր դարձրել բաշրուռունը (Մենուախինիլի)՝ Արաքսի աջ ափին։

Անշուշտ այդ է թելադրել ժամանակի իրադրությունը և ի դուր չէ, որ Արգիշտին շարունակում է հոր քաղաքականությունը, ամրանում է Արարատյան դաշտում և իր ողջ ռազմա-շինարարական գործունեությունը կենտրոնացնում է այդտեղ. իսկ Սարդուրը աշխատում է իր հոր նվաճումներն ամուր պահել և զբաղվում է հատկապես կրոնա-շինարարական ու նվիրարերական աշխատանքներով։ Բնորոշ է, որ բերդերի կառուցման մասին հիշատակում են միայն Արգիշտիի արձանագրությունները—Հոկտեմբերյանի (Սարդարարատի)

և վերջերս Արինբերդից հայտնաբերած 13 տող արձանագրությունը. առայժմ մեզ հայտնի տվյալներով Արգիշտի Ա-ը բերդ (Ê. GAL) է կառուցել Արմավիրում և Արինբերդում։ Նախորդ ուսումնասիրողների կողմից մեր տերիտորիայում հայտնաբերած Սարդուր Բ-ի տեքստերում վերականգնած Ê. GAL-ը (բերդ) բոլոր դեպքերում սխալ է. Ջանֆիդայի արձանագրության չորրորդ տողում չի կարող Ê. GAL լինել, որովհետև վերջին GAL (𒃲) նշանի համար քարի վրա տեղ չկա, իսկ գաղափարագրի բաղկացուցիչ այդ մասը դժվար թե երկրորդ քարին տեղափոխված լինի. հօգուտ այս ենթադրության է խոսում ամբողջ տեքստը՝ իր կրոնական բնույթով։ Բամբակաշատի 10 տող ունեցող արձանագրության երկրորդ տողի շարունակության մեջ, մեր համոզմամբ, նույնպես ճիշտ չէ Ê. GAL-ի վերականգնումը։ Առաջին տողի (ᵈSar-du-ri-se) ընթերցումը ցույց է տալիս, որ երկրորդ տողը համապատասխան տեղում պարունակելու է 4—7 սեպախումբ և, ուրեմն, Ê. GAL-ը (𒁀𒁀𒁀𒁀 𒃲) չի կարող ծածկել պակասող ողջ տողը. կարծում ենք այդտեղ եղել է dHal-di-na-ni KA=«Խալդյան դռներ» (կամ նման բան)։

Հետաքրքրական է, որ վերջերս Արինբերդից գտնված Սարդուր Բ-ին հիշատակող գրեթե միակ շինարարական արձանագրությունը խոսում է ոչ թե բերդի՝ Ê. GAL-ի կառուցման մասին, այլ Ê. ʾari-ի, որը մենք սխալ ենք համարում թարգմանել բերդ իմաստով։ Նախ այն պատճառով, որ բոլոր դեպքերում Ê. GAL-ի հետ կիրառվում է šıdiištuni (=կառուցեց) բայը, իսկ Ê. ʾari-ի կամ ավելի ճիշտ ʾari-ի հետ՝ šuuni (=բարձրացրեց?) բայը. եթե ʾari-ն և Ê. GAL-ը նույն բերդ իմաստն ունենային ʾari-ի հետ երբեմն կարող էր կիրառվել sıdiistuni բայը և հակառակը՝ Ê. GAL-ի հետ՝ šuuni բայը. երկրորդ՝ ըստ երևույթին ʾari-ն կառուցվել է այնտեղ, ուր արդեն նախապես եղել է բերդ, ինչպես այդ տեսնում ենք Արմավիրում, Արինբերդում և այլուր. նույն տեղում երկրորդ բերդ կառուցելու անհրաժեշտություն չէր կարող լինել, մանավանդ որ Արինբերդում բացի Ê. GAL-ից (բերդ), Արգիշտին՝ վաղուց հայտնի մի արձանագրության մեջ, որ նույնպես գտնված է Արինբերդից (Ղանլիթափայից) խոսում է ʾari-ի կառուցման մասին։ Բոլոր դեպքերում ʾari-ին հաջորդում է՝ որևէ թիվ և kapiištini դեռևս չպարզված կապակցությունը. kapi-ն թերևս տարածական չափ է, ինչպես ենթադրվում է որոշ գիտնականների կողմից. բայց ի՞նչ բովանդակություն ունի չափը և ի՞նչ կառուցվածք կարող է լինել ari-ն, մեր կարծիքով՝ այդ կպարզվի միայն լուրջ պեղումներից հետո, ճարտարապետական չափումներից հետո. եթե ընդունենք, որ ʾari-ն բերդ ուրարտական բառն է, իսկ kapiistini-ն տարածական չափ է, ապա դժվար է համաձայնվել, որ Արինբերդի ուրարտական ʾari-ները (Արգիշտիի ու Սարդուրի կառուցած) և Արմավիրի ʾari-ն ու այլ վայրերի ʾari-ները իրենց ծավալով շատ տարբեր լինեն իրարից. եթե ուրարտական բերդերը կառուցվել են 10—15 հազար միավորի սահմաններում, իսկ Պաղնոցի արձանագրության մեջ նույնիսկ 19 հազար, ի՞նչպես է, որ Արմավիրում բերդը կառուցվել է ընդամենը 1432 միավորի չափով։ Մի բան համենայն դեպս պարզ է, որ ari-ն բերդ չէ, այլ մի ուրիշ կարևոր կառուցվածք բերդին կից կամ բերդի ներսում, և որ Արգիշտիի ու Սարդուրի ժամանակ Ուրարտուն Արարատյան դաշտում դրաղվել է լայն շինարարական աշխատանքով։

Սարդուր Բ-ից հետո արդեն շինարարական աշխատանքը անհամեմատ դանդաղում է։ Ռուսա Ա-ի անունով մեր տերիտորիայից հասել է ընդամենը երկու արձանագրություն, երկուսն էլ ռազմա-նվաճողական բնույթի կարևոր տեքստեր են (Ծովինարը և Նոր-Բայազետը)։ Պարզ է, որ Սարդուր Բ-ի տիրապետության վերջում արդեն Ուրարտուն նեղվում է նաև Արարատյան դաշտում և Ռուսան ստիպված էր հենց սկզբից ռազմական գործողությունների դիմել, սաստել ապստամբներին ու ծայրամասերում փոխարքաներ նշանակել, ինչպես հաղորդում է Նոր-Բայազետի արձանագրությունը։

Ուրարտուն արդեն զգում էր իր օրհասը. Ռուսա Ա-ն «իր ձիով ու իր սեփական ձեռքերով է վերականգնում» իր պետությունը։ Մեր կարծիքով նույնիսկ Ռուսա Բ-ի օրով հայտնի չէ խոշոր կառուցողական ձեռնարկություն։ Կարմիր-Բլուրը (Թեյշեբայի քաղաքը) արդյոք մինչ Ռուսան կառուցված չի՞ եղել. եթե ընդունենք, որ Զվարթնոցի կոթողը խոսում է Կարմիր-Բլուրի շրջակայքում տարված շինարարական աշխատանքների մասին, ի՞նչպես կարող է Ռուսան չհիշատակել այնտեղ բերդի կամ թագավորանիստ այդ

---

[1] Կասկածից դուրս է, որ նման բերդեր պետք է փնտրել և այլուր, նույնիսկ ավելի հյուսիս՝ Լենինականի շրջակայքում, որտեղից ունենք սեպագիր արձանագրություններ։

Տեղեկագիր 4—7

կենտրոնի կառուցման մասին, եթե այդպիսին նա կառուցել էր։ Սրանք հարցեր են, որ մեր առաջ դնում է տեքստերի ուսումնասիրությունը և որոնք վերջնական լուծում կստանան միայն պեղումներից ստացվող լրացուցիչ նյութերի շնորհիվ։ Իսկ շատ հարցեր կպարզվեն, երբ ուրարտական արձանագրությունների լրիվ կորպուսը կկազմվի և կուսումնասիրվի սովետական ուրարտագիտության ու ընդհանրապես սովետական ֆիլոլոգիայի ու պատմագիտության տեսանկյունից։

Մ. ԻՍՐԱՑԵԼՅԱՆ
Պատմության ինստիտուտի
Հնագիտության և էպիգրաֆիկայի
սեկտորի կրտսեր գիտ. աշխատող